

Մերզո ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ԽՈՍՎԱԾՔԻ ԵՐԵԿՆ ՈՒ ԱՅՍՕՐԸ

Հանրապետության տարածքում այսօր կենցաղավարող խոսվածքների մեջ քիչ չեն այնպիսիները, որոնք դեռևս կարող են հանգամանալի լեզվաբանական քննության: Դրանց վերաբերող հրապարակումները գերազանցապես ծառայում են այս կամ այն գեղարվեստական գործում դրսևորվող խոսվածքային իրողությունների ոճաարտահայտչական արժևորման նպատակին: Ավելացնենք, որ այդ իրողություններն էլ, որպես կանոն, սովորաբար խոսվածքի երեկվա օրն են, մինչդեռ խոսվածքն ինքը՝ իբրև կենդանի լեզվի ամենաիրական դրսևորում, մշտափոփոխ է ժամանակի հոլովույթի մեջ, հետևաբար ժամանակ առ ժամանակ անդրադարձը նրա լեզվաքերականական առանձնահատկություններին ոչ միայն ցանկալի է, այլև անհրաժեշտ: Այս տեսակետից բացառություն չէ նաև հայերենի «կը» ճյուղի ամենաազդեցիկ ու խոշոր Կարնո բարբառի խոսվածքներից մեկի՝ Գյումրու խոսակցական լեզվի ճակատագիրը:

19-րդ դարի առաջին երեք տասնամյակներին տեղի ունեցած ռուս-թուրքական /1806-1812 և 1828-1829թթ./ պատերազմները դեպի Արևելյան Շիրակ կարսեցի, կարինցի, բայազետցի հոծ զանգվածների մասսայական գաղթերի պատճառ եղան՝ Ախուրյան գետի արևելյան ափ բերելով հանուն ապահով կյանքի իրենց հայրենական օջախները լքած հազարավոր հայերի: Վերջին տարիներին իրականացված ժողովրդագրական լուրջ ու մանրաքնին ուսումնասիրությունների ստույգ տվյալներով՝ ցարական կառավարության ընձեռած արտոնություններից և հնարավորություններից օգտվելով, 1829-31թթ. ներգաղթերը շուրջ 1250 ընտանիք արևմտահայեր բերեցին Գյումրի, որը «ռուսական զինական ուժի ներկայության շնորհիվ դառնալով հուսալի՝ սկսել էր դեպի իրեն ձգել պատերազմներից ու զրկանքներից այս ու այն կողմ ցրված հայերին»¹:

Արդեն 19-րդ դարի երեսնական թվականներին դրսեկ տարրը բացարձակ գերիշխող էր Գյումրու բնակչության կազմում, իսկ եկվորների մեջ ճնշող մեծամասնություն էին Կարսից /600 ընտանիք/, Բայազետից /մոտ 300 ընտանիք/, Կարինից /200 ընտանիք/, Բասենից ու Մուշից /մոտ 100-120 ընտանիք/ գաղթածներն իրենց տնտեսական, նիստուկացի ու մշակույթի /այդ թվում՝ նաև բարբառի/ առանձնահատկություններով: Աննախադեպ ու հսկայական էր նրանց դերը ձևավորվող և օրավոր գարգացող նոր քաղաքի ոչ միայն տնտեսական վերելքի մեջ, հասարակական կյանքի բոլոր ոլորտներում, այլև քաղաքի ինքնատիպ հոգևոր դիմագծի կայացման և, վերջապես, բնակավայրի խոսակցական լեզվի ընդհանուր նորմերի ձևավորման մեջ:

Հետագա հարյուր ութսուն տարիներն իրենց ծնած պատմաքաղաքական բուռն իրադարձություններով, հասարակարգային կտրուկ վայրիվերումներով, ժողովրդագրական աշխույժ տեղաշարժերով հանդերձ էական փոփոխություններ չառաջացրին խոսվածքի ընդհանուր պատկերի մեջ, որն այսօր Գյումրու և մասնակի տարբերություններով նաև հարակից տարածաշրջանների՝ Արթիկի, Ախուրյանի, Անիի, Աշոցքի, Ամասիայի բնակավայրերի զգալի մասի խոսակցական լեզուն է:

Գյումրու արդի խոսվածքին բնորոշ հնչյունական իրողությունների ընդհանուր պատկերն այսպիսին է.

¹ Տես Հայրապետյան Ա.Ս., Արևելյան Շիրակը 19-րդ դարի առաջին կեսին, Եր., 2005, էջ 171:

- Խոսվածքն այսօր իր ձայնեղ, խուլ և շնչեղ խուլ բաղաձայնների արտասանությամբ ամենևին չի տարբերվում գրական հայերենից: Սակայն բառասկզբում շնչեղացող իր հինգ ձայնեղ պայթականների՝ բ', գ', դ', ձ', ջ' /բ'իրադի, բ'օրիգ, գ'էլ, ձ'ուն, դ'անագ, ջ'օգել և այլն/ առկայությամբ պահպանում է Կարնո բարբառի քառաստիճան բաղաձայնական համակարգը², թեև գրական արևելահայերենի ազդեցությամբ հատկապես խորհրդային վերջին տասնամյակներից սկսած՝ այդ համակարգը աստիճանաբար կորցնում է մայր բարբառի շնչեղ ձայնեղները, որոնք նոր սերունդը կարծես թե միտում ունի փոխարինելու սովորական ձայնեղներով: Այնուամենայնիվ այս գործընթացը դեռևս հեռու է իր ավարտից, և, եթե նկատի ունենանք մահ գերագանցապես ձայնավորասկիզբ բառերին հավելվող ձայնեղ հ /Ս/ ³ հնչյունը / Սընչի, Սարուն, Սուրդեղ/, ապա ստացվում է, որ բաղաձայնների թիվը խոսվածքում շարունակում է մնալ երեսունվեց, ասել է թե՛ վեցով ավելի գրականից:

Խոսվածքին խիստ տիպական է բառամիջում /ձայնավորներից կամ ր-ից հետո/ և վերջում ձայնեղների շնչեղ խուլ արտասանությունը /որբևայրի-օրփեվերի, որդեկ-օրթընել, իջնել-Սիչնել, մեղադրել-մեխքըրել, մարդ-մարթ, առողջ-Սառօխչ, օձ-Սօց և այլն/: Մյուս հակառակ՝ ձայնեղ պայթականների խլացում դիտվում է հազվադեպ՝ միայն խից հետո, ինչպես՝ եղբայր-ախպեր, աղբյուր-Սախպուր: Պահպանվել է նաև Կարնո բարբառի գրեթե բոլոր խոսվածքներին բնորոշ հնչյունական մեկ այլ օրինակափոխություն: Խոսքը վերաբերում է բառամիջում և վերջում ձայնավորներից ու ձայնորդներից հետո խուլ պայթականների ձայնեղացմանը /շապիկ-շաքիգ, քրտինք-քրդինք, ընկեր- Սընգեր, դպրոց-դըրբոց և այլն/: Հատկանշական է, որ վերոհիշյալ հնչյունական իրողությունները ներկայումս համեմատաբար թույլ դրսևորում ունեն խոսվածքում և գրեթե չեն տարածվում նորաբանությունների ու հատկապես մերօրյա փոխառությունների վրա, ինչպես՝ ինտուրիստ, ֆանտա, ալկաշ, արտիստ և այլն:

Խոսվածքի ձայնավորները, ինչպես գրական հայերենում, վեցն են՝ ա, օ, ու, է, ի, ը: Կան նաև առաջին երեք ձայնավորների քմային տարբերակները՝ օ, ս, օ հին /հիմնականում պարսկերենից և թուրքերենից/ փոխառություններում /քնթագ, քօբար, գնդուգ/: Ի դեպ, այլ, հատկապես նոր փոխառություններում մանօրինակ քմայնացում չկա /կօֆե, կառուօլ և այլն/: Արդի գրական լեզվից խոսվածքի ձայնավորական համակարգի տարբերությունները հիմնականում հետևյալն են.

Ինչպես Կարնո բարբառի այլ խոսվածքներում, այստեղ էլ բառերի վերջընթեր վանկում ձայնավորները սովորաբար աղվում կամ վերածվում են ը-ի , ինչպես՝ բաժանել-բաժնել, անալի-Սալնի, կարկատել-կարգողել, ծանրանալ-ծանդրանալ, հանդիպել-հանդրբել, լիզել-լրզել, ոլորել-օլորել և այլն: Կարելի է անվարան պնդել, որ այս հնչյունական երևույթը գրական լեզվի ազդեցությամբ վերջին տասնամյակներից զգալիորեն տեղի է տվել, և խոսվածքում այսօր բավականին նկատելի է դարձել մանօրինակ դեպքերում ձայնավորների՝ գրականից չտարբերվող արտասանությունը, ինչպես՝ ազատել-ազադել, ողորմի-օղօրմի և այլն: Խոսվածքին բնորոշ են նաև ձայնավորների և երկհնչյունների փոփոխություններ բառասկզբում /ասել-ըսել, աղջիկ-Սըխչի, անել-էնել, եղբայր-ախպեր, ինձ-Սընձի, որտեղ-Սուրդեղ, երեկո-Սիրգուն, երագ-երած, ոչխար-օչխար, ռոնալ-օռնալ, ով-վօվ, ուղարկել-ղրրգել, այծ-էծ, որբևայրի-օրբեվերի/, բառամիջում /աղավնի-աղունիգ, մեխ-մըխ, սեղմել-սըխմել, ոլորել-օլորել, թոնիր-

² Տե՛ս *Մկրտչյան Հ.*, *Կարնո բարբառը*, Եր., 1952, էջ 11:

³ Տառադարձումը Հ.Մկրտչյանինն է-Ս.Հ.: Միաժամանակ համաձայն չենք նրա այն պնդման հետ, թե այդ հնչյունը «գործածվում է բառասկզբում և՛ ձայնավորներից, և՛ բաղաձայններից առաջ» /տե՛ս *Մկրտչյան Հ.*, *նշվ. աշխ.*, էջ 11-12/: Վերջինիս վերաբերող օրինակները, որ բերում է *Մկրտչյանը* /Մղուղ, Սղունգ և այլն/, իրականում ձայնավորասկիզբ են՝ Սըղուղ, Սըղունգ:

թընդիր, գլուխ-գլխիս, փայծախ-փիծէխ, արյունլվա-Սարընլվիզ/, բառավերջում /քոքու, գոնյա-գօնէ, աստծո-ասծու/, միաժամանակ բառի տարբեր մասերում /դեպի-դրբա, ուղեղ-Սըղող, ինչու-Սընչի, ապա-Սըբը, ավելի-էվէլ և այլն/:

- Գրական լեզվի ազդեցությամբ ներկայումս գյումրեցիների խոսվածքում զգալիորեն թուլացել է բառակազմի բաղադրանական կապակցություններից /սպ, ստ, սփ, շտ և այլն/ առաջ բարբառին նախկինում խիստ բնորոշ ը ձայնավորի ընդգծված արտասանությունը /շտապել-ըշտաբէլ, սպանաղ-ըսպանլըխ և այլն/: Անտարակուս, նույն ազդեցության հետևանք պիտի դիտել նաև խոսվածքում գոյականակերտ *-ություն* ածանցի նախկինում *-ութէն*-ի փոխարեն վերջին շրջանում գրեթե միօրինականացված *-ութուն* արտասանությունը /դրություն-դրութէն-դրութուն, եղբայրություն-ախպրութէն-ախպրութուն/:

Խոսվածքին բնորոշ հնչյունափոխական իրողություններ են նաև՝

- հնչյունների մասնակի և լիակատար առնմանության և տարմանության բազմաթիվ դեպքեր, ինչպես՝ ձուագեղ-ձըվածեղ, բոկիկ-բ'օրիզ, պատճառ-պաճճառ, շարժ-ժաժք /նաև՝ բ-ի անկումով/, հավասար-հաֆսար, անապակ-ամբագ, խակ-ղագ, կանգնել-կայնել, կրնմանի-գըլմանի

- Մեծաթիվ են նաև դրափոխությունները՝ սովորել-սօրվել, դատարկել-դ'արդդգէլ, բանալի-բ'ալնիք, ոչխար-օխճար, լվացք-վլացք, պլոկել-լըբօգէլ:

- Կան նաև հնչյունի կրկնության ինքնատիպ դրսևորումներ, ինչպես՝ ամեն անգամ-Սամմէն անկամ, մենակ-մեննագ:

- Քիչ չեն բաղադրան հնչյունների ինչպես անկման /պաշտպան-պաշպան, ջրադաց-ջ'աղաչ, սկեսուր-կիսուր, խորիսխ-խօրիզ, շնորհակալ-շընօրագալ, մեկ հատ-մէաղըմ, գոլորշի-գօլօշի, դուրս-դուս, երբ-յէփ, ջրհեղեղ-ջըրեղէղ/, այնպես էլ հավելման երևույթները՝ օրհնել-օրթնէլ, ճանկել-ճանգըռել, ճանգըռտել, ամպ-Սամբ, մանր-մանըռ, ամաչել-ամընչէլ, թմրել-դ'ըմբռէլ, ավելորդ-Սավլւօրթ և այլն:

- Մեծաթիվ բառերում միաժամանակ դիտվում են հնչյունափոխական մի քանի երևույթներ, ինչպես՝ սկեսրայր-կերսար /անկում, դրափոխություն, երկհնչյունի պարզեցում/, կամուրջ-կարմունջ/հավելում և դրափոխություն/, կանգնել-կայնել / տարմանում և կորուստ/, արյուն-Սարուն /հավելում և երկհնչյունի պարզեցում/, ամեն-Սամմէն /հավելում և կրկնություն/, մեկ հատ-մէաղըմ /անկում և հավելում/, բանալի-բ'ալնիք /կրկնություն, սղում, հավելում, դրափոխություն/ և այլն:

Մեր պատմության խորհրդային շրջանի հատկապես վերջին երկու-երեք տասնամյակները լեզվաշինության, մասնավորաբար, գրական հայերենի աննախադեպ զարգացման և նրա իրական հաղթարշավի տեսակետից եղան լրջագույն հաջողությունների ու ձեռքբերումների տարիներ, որոնք բարեբար ներգործություն ունեցան նաև հանրապետության տարածքում գործառնական բարբառների ու խոսվածքների բառապաշարի վրա: Գյումրու խոսվածքն այս առումով բնականաբար, չէր կարող մեկուսի մնալ: Նրա բառապաշարում ևս արձանագրվում են զգալի տեղաշարժեր, որոնք հիմնականում հանգում են հետևյալին.

- Եթե Կարևո բարբառը գրական լեզվի իսկական բարդությունների մեծ մասը վերածում էր նույնիմաստ բառակապակցությունների⁴ /երկերեսանի-երգու Սէրեսանի, կախգլուխ-գլխիսը կախ, հացթուխ-հաց էփօղ, պատաշար-պաղ շարօղ, վարսավիր-թրաշ էնօղ, մեծագլուխ-գօնչ գլխիս, կնամուլ- Սաշքը շոռ, չարախոս-շան լիգու, անպատկառ-շան յէրես, ջրադացքար-ջ'աղջի քար, ավարառություն-ալան-թալան,

⁴ Տե՛ս Մկրտչյան Հ., նշվ. աշխ., էջ 97:

զագրախոսել-գ՛ղվորա խօսել/ կամ փոխարինում դրանք փոխառյալ բառերով ու բառակապակցություններով /զագրախոս-բ՛օշբօղագ, վարսավիր-դ՛ալլաք, շատախոս-գ՛յավագա/, ապա Գյումրու խոսվածքը ներկայումս գրական լեզվից անցած բազմաթիվ իսկական բարդություններ է գործածում, ինչպես՝ մարթատեղ, մեղրահաց, գ՛ըլխակեր և այլն:

- Եթե հայերենի ա հոդակապը անչափ թույլ գործածություն ունի Կարնո բարբառում /աղջուր, գ՛ղընփօր, Սարընքտեր, մաղընշունչ, ալըրմաղ, մաղընքաշ, բացգլօխ, վօղընլըվա, թընդըրտուն/, ապա ներկայիս Գյումրու խոսվածքում /հարկե, կրկին գրական լեզվի ազդեցությամբ/ այն անհամեմատ ավելի գործուն բառակազմական միջոց է /բռնցքամարդ, մարթաթօղ, Սարնախում և այլն/:

- Այդպես էլ՝ Գյումրու արդի խոսվածքը մայր բարբառի համեմատ շատ ավելի հարուստ է հայերենի բառակազմական օրինաչափություններին համապատասխանող ածանցավոր /հատկապես նախածանցավոր/ և բարդ բառերով, մա խորհրդային տարիներից ժառանգած նորագույն հասավումներով, որոնք, բնականաբար, Կարնո բարբառը չէր կարող ունենալ, ինչպես՝ չէկա, քաղկօմ, խորարծառ /խորհրդային առևտրի ծառայողների ակումբ/, քաղմաս, լեսօզբիտ, զակօզեռնօ, վաեմտօրօ, բուծքուր, էնկավեդե, զագդեպօ, ռաբիզ, պռառաբ և այլն :

- Վերջին մի քանի տասնամյակները անչափ նպաստավոր եղան Գյումրու խոսվածքի համար բառապաշարի՝ բարբառին բնորոշ թուրքական /մասամբ պարսկական/ հսկայաքանակ /ավելի քան երեք հազար/ փոխառությունների մի ստվար մասից ազատվելու /դրանք իրենց հայերեն համարժեքներով փոխարինելու/ առումով: Թեև այսօր էլ խոսվածքն ավանդաբար պահում է բազմաթիվ օտար բառեր /գ՛յօլ, գ՛յուլլա, գ՛իլա, բի՛թուն, բ՛իրդան, գ՛յօրմամիշ, թաթալաբագ, թավաքյալի, շիշաջի, ջ՛անդակ, քեֆարզ, բ՛եթար, քյադագ և այլն/, այնուհանդերձ հարյուրավոր այլ փոխառություններ այլևս անգործածական են նրանում /թ՛օքըռ, դավալ, յադ, ֆարազի, ֆայդա, ֆալճի, օրթա, օլսիաթ, ք՛օրդիզա, տալաշմիշ, վեքիլ, սըրմա և այլն/:

Նույնը չի կարելի ասել խոսվածքի բառապաշարի՝ ռուսերենից փոխառյալ բառաշերտի մասին /կաթօլ, պիսօկ, կուշկա, կուկլա, սամավար, սաֆսեմ, սարֆեդկա, սիմուշկա, վեդո, ֆանառ, ֆատոն, ֆուրդուն, օշեր, շիքառնի, պարիզմախեր, ֆիթիլ, փեշք, տըրուբա և այլն/, որն, իհարկե, և՛ քանակով, և՛ գործառությամբ մի քանի անգամ զիջում է առաջիններին, սակայն անհամեմատ կայուն բառաշերտ է, ավելին, խորհրդային տարիներին օբյեկտիվ պատճառներով քանակապես անընդհատ աճել է /սպիշկա, կոիշկա, չեկա, կամունարկա, բիսեդկա, միլիժա, պեթելնիժա, կալբաստ, սիլօդկա, տելեվիզօր, պադումայեշ, պաժալուստա, զակուսկի, պիլասօս, շտեպժե, պառկեդ, սադ, պռավադնիզ, մաշինա, շօֆեռ, զապչաստ և այլն/:

- Այսօր էլ խոսվածքում ակտիվ գործածական են փոխառյալ բաղադրիչով բազմաթիվ ածանցավոր և բարդ բառեր /դ՛ամըրճնօց, դ՛ավաթվօր, թանգաբագար, Սառգահատիկ, թեզսիրդ, պարբաշի, դ՛ուզնագատ, գ՛յուլլախօրօվ, դ՛արդլամիշ եղնել, դ՛օզանի բեբել/ուղղել/, էյթաջ եղնել /սպավիհնել/, թ՛օրզը տալ /դադարեցնել/, զ՛օվճամիշ եղնել/շատախոսել/, դ՛լաթ էնել /սխալվել/, քյալլա տալ /պայքարել/, չանգեքը յեղել /շատախոսել/, չաշկա լօշկա եղնել/մտերմանալ/, մաև յուրահատուկ դարձվածքներ՝ գ՛յարդանը խուրդ եղնել, գ՛յօթեգյօթ եղնել, գ՛յօթը չդադրել, գ՛յուլլի բերան դրգել և այլն:

- Ճոխ ու բազմազան են խոսվածքում գործառվող դարձվածքները: Խտացնելով իրենց մեջ ժողովրդի կենսափիլիսոփայությունը, իմաստավորված նրա դարավոր կենսափորձով՝ դարձվածքներն անփոխարինելի գանձ են յուրաքանչյուր լեզվում բանավոր կամ գրավոր խոսքին պատկերավորություն, դիպուկություն և արտահայտչականություն հաղորդելու տեսակետից: Գյումրու խոսվածքն ըստ էության դարձվածքների անհա-

տակ շտեմարան է, որում և՛ հսկայական քանակությամբ համագործածական դարձվածքներն կան /Ադն է կերել մադադը: Էծն Սիրա վոզով կըկախեն, օջիսարն Սիրա: Գ՛ավեն նստե, կուզեկուզ ման գուքա: Մուզը ծազը չի էրթա, ցախավելը պօչեն կըկախեն/, և՛ այլ խոսվածքներում կան գրական լեզվում չհանդիպող կամ քիչ գործածական, առավելապես գյումրեցիներին կամ Շիրակյին հարազատ դարձվածքներ /Շունը շարիզ է հազել, կադուն՝ վարդիզ: Գյօռը չըդադրի: Գէլթօզի էնել: Քամին ցրդից մեռավ, ագորվներն էլ սև հագան/, և այս ամենը՝ խոսակցական լեզվին հատուկ բառապաշարով, քերականական իրողություններով, հնչերանգով և շեշտադրությամբ:

Հարկ է նաև ավելացնել, որ գյումրեցիների խոսվածքում այսօր գրեթե չկան Կարնո բարբառում նախկինում գործածված փոխառյալ /թուրքերենից կամ պարսկերենից/ դարձվածքներ /Գարդ վար գ՛յալար գ էչար, դարդ վար յամար գ էչար /Գարդ կա՝ գուքա ու կերթա, դարդ կա՝ վառե ու կերթա/: Քյօզ օլիմ /Մօխիր կըդդեն/: Մաղ օլսուն՝ սաղօլ օլսուն և այլն/, իսկ խառը կազմությամբ դարձվածքների օտար բաղադրյալներից շատերը սկսում են փոխարինվել հայերեն համարժեքներով /Վօդներդ յորդանիդ գ՛յօրա ձըզէ-Վօդներդ վերմակիդ չափով ձըզէ: Իշտայիդ՝ քացախ-Ախորժակիդ՝ քացախ/:

Ժամանակակից գրական հայերենի ազդեցությունը նկատելի է նաև Գյումրու խոսվածքի քերականական համակարգի վրա, որն, ի տարբերություն բառային կազմի, սովորաբար ենթակա չէ արագ փոփոխությունների: Այնուհանդերձ վերջիններս առկա են գյումրեցիների արդի խոսակցական լեզվում: Այսպես՝

- Էր և ներ հոգնակիակերտ մասնիկները վեր են ածվել գոյականների հոգնակիի դրսևորման հիմնական միջոցների /նըզներ, սանդրոներ, ողսներ, պարտքեր, բ՛ամբասանքներ/: Այսօր նրանցով են հոգնակիանում նաև ոչ հեռու անցյալում այլ հոգնակիակերտներ ունեցող շատ բառեր՝ ախալըրդիք-ախալըրդանք-ախալերներ, ամըննիք-ամըններ, կըդօրդանք-կըդօրդանքներ: Խոսվածքում անչափ նեղացել է այն գոյականների շրջանակը, որոնց հոգնակին շարունակում է արտահայտվել գրաբարյան ք մասնիկով /տըդէք, էրէխէք, խնամիք, քաղըրցիք, գյումրեցիք, բալէք և այլն/, թեև այս և այլ բառերի գերակշիռ մասը ներկայումս օգտագործում է նաև գրականին մոտ հոգնակիի ձևեր /խնամիներ, քաղըրցիներ/:

- Կարնո բարբառի հոլովման համակարգի առանձնահատկություններից մեկը որոշյալ սեռականի առկայությունն էր /սեղանին վօղը, տերդերին կընիզը/: Սակայն Գյումրու խոսվածքում սեռականը հիմնականում գրական լեզվի ազդեցությամբ վաղուց արդեն կորցրել է որոշիչ հողը /պատվի թոռ, ախալօր տըղա, ջ՛աղչի քար/: Թեև գոյականների ճնշող մեծամասնությունը /եր/ներ-ով հոգնակիացողները/ հոգնակի սեռականում ստանում է ու հոլովիչ /պատվըներ-պատվըներու, Սաղմըներ-Սաղմըներու/, մի որոշ մասն էլ /ք-ով հոգնակիացողները/ հոգնակի սեռականում ունեն գրաբարը հիշեցնող օգ վերջավորություն /մարթիք-մարթօց, կընգըրդիք-կընգըրդօց, տըդէք-տըդօց/, սակայն վերջին շրջանում խոսակցական լեզվում այլ հոլովումների հաշվին ավելի գերակշռող և գործուն է դառնում ի-ով եզակի սեռականը /տալ-տալօջ-տալի, կէսուր-կէսրօջ-կիսուրի, գ՛ըլօխ-գ՛ըլխու-գ՛ըլխի/, այլև ի-ով սեռականի հոգնակին /պատվըներու-պատվըների, տըդօց-տըդէքի և այլն/: Չգալիորեն աճել է այն գոյականների քանակը, որոնք եզակի և հոգնակի բացառականի էն-վ ձևերի կողքին գործածվում են նաև ից/ուց հոլովակերտով, ինչպես՝ ձիեն-ձիուց ձիերեն-ձիերից, բալօցեն-բալէքից, մարթ-մարթեն-մարթուց, սաստըծմեն-սասծուց, գ՛ըլխեն-գ՛ըլխուց, գ՛ըլխըներեն-գ՛ըլխըներուց/ից, ձընեն-ձընից, տարվանեն- տարուց, տարիներեն-տարիներից և այլն: Այդպես էլ՝ գրականին ավելի է մոտեցել նաև գյումրեցիների արդի խոսվածքի գործիական հոլովաձևը /հմնտ.՝ տարվըներով-տարիներով, բ՛ալօցով-բ՛ալէքով, տըդօցով-տըդէքով և այլն/:

- Համեմատաբար սակավ են Կարնո բարբառի ածականի, թվականի ու դերանվան փոփոխությունները Գյումրու խոսվածքում: Գրանցից թերևս կարելի է նշել ածականի բաղդատականի կազմության մեջ մի ժամանակ բավականին գործուն ջիլիզ և բեթար թուրքերեն բառերի /երկրորդը՝ ժխտական իմաստով/ խոսվածքից գրեթե ամբողջությամբ դուրս մղվելը /ջիլիզ լավ, բեթար վատ/, տազ-ով բազմապատկական թվականների նվազ գործածական դառնալը /Սիրէքտազ, հինգտազ/, դերանունների մեծ մասի էն-ով բացառականի փոխարեն ից-ով ձևերի ավելի հաճախակի դրսևորումները /Սուրդէղէն-Սուրդից, մեզնէն-մեզնից, մեզէլէն-մեզէլից, Սամսէն մեզէն-Սամսէն մեզից/:

- Ընդհանուր օրինաչափություններով Կարնո բարբառի բայական համակարգին հարազատ մնալով հանդերձ՝ Գյումրու խոսվածքը գերազանցապես գրական լեզվի ազդեցությամբ ներկայումս մի շարք իրողություններով նկատելիորեն հեռացել է նրանից: Այսպես՝ գյումրեցիների նոր սերունդները վաղակատարի էր վերջավորությունը խոսվածքում վաղուց են փոխարինել էլ-ով /աղալ-աղցէր-աղցէլ, տեսցընէլ- տեսցըրէր-տեսցըրէլ/, և էր-ով վաղակատարը մնացել է թերևս գյումրեցի հնարման ծեղերի բերանում: Գրեթե մոռացության են մատնվել Կարնո բարբառին բնորոշ և գրական լեզվի համակցական դերբայը հիշեցնող -դան մասնիկով /թուրքերենի ազդեցություն/ լրսածդան, քելածդան և այլ դերբայական ձևերը /լրսածդան խօսքըս կըղրիր/: Եթե բարբառում սահմանական ներկայի ու անկատարի կը/զը մասնիկը սովորաբար հաջորդում է բաղաձայնակիզ բային /սիրէմ կը, մօրթէմ կը/, իսկ ձայնավորակիզ բայերի վրա մասնիկն հավելվում է նաև սկզբից /կուղէմ կը, կէրթայի կը/, ապա Գյումրու արդի խոսվածքում առավել սովորական է դարձել կը մասնիկի առաջադաս գործածությունը, ինչպես՝ կը սիրէմ, գուլամ, կէրթայի, գուգաք, կաշէնք և այլն: Թերևս միայն հնարմանների խոսքում կարելի է հանդիպել պատճառականի վերջուցի, խըմցուցիք և նման այլ ձևերին, որոնց փոխարեն ներկայումս առավել գործածելի են գրականին նմանվող անցյալ կատարյալները /վերցըրէցի, խըմցըրէցիք և այլն/:

-Մեր դիտարկումներով՝ բարբառի ինը տասնյակի հասնող փոխառյալ /գերազանցապես թուրքերենից/ մակրայերի մեծ մասն այսօր Գյումրու խոսվածքում կամ այլևս գործածական չէ /արթըխ-հետո, դաֆիլ-հանկարծ, ս^օդ^օ-անընդհատ, ֆ^օր^օզի-իզուր, սալք-միայն և այլն/ կամ պահպանվում է հնից եկող կայուն կապակցություններում, ինչպես՝ կողք բօլօրը կֆըռռա, օրթայէն /մեջտեղից/ կուղէ, ս^օբըր էրա /համբերիր/, դըր^օղ կայնի /առանձնացիր/, դ^օզմ^օ հալօվ /հեշտ/ և այլն: Այդպես էլ՝ խոսվածքի փոխառյալ կապերը, շաղկապներն ու ձայնարկություններն են /սավայ-բացի, գ[՛]յօրա-համեմատ, բ[՛]աշտան-պես, ամա-բայց, ք[՛]քիլա-միայն թե, չունքի-որովհետև, հայդէ[՛]/կոշ/, հ^օլլա[՛]/զարմանք/, քյաշկա[՛]/երանություն/ վերջին տասնամյակներին դարձել չափազանց նվազ գործածական:

Գյումրու խոսվածքի շարահյուսական համակարգը, որն ըստ էության ամբողջապես Կարնո բարբառինն է, իր հիմնական օրինաչափություններով գրական հայերենից նկատելի տարբերություններ չունի: Թերևս նշենք մի քանի աննշան իրողություններ, ինչպիսիք են, ասենք, թվական որոշիչ հետ գոյականի գերազանցապես եզակի լինելը /հ^օզ^օր հօգի, Սիրէք Սընգէր/, կամ մեծաքանակ բակառությունները /վօղնէրս հօզնավ, աչքէրս կը ցավի, մաղնէրս մըրսավ և այլն/, կամ հոլովաձևերի՝ գրականից տարբերվող մի քանի շարահյուսական կիրառությունները և այլն:

Վերը ասվածը թույլ է տալիս արձանագրել, որ հատկապես խորհրդային պատմության վերջին տասնամյակներից սկսած, Գյումրու արդի խոսակցական լեզուն, որ Կարնո բարբառի ամենամեծ ու կենսունակ խոսվածքն է մեր հանրապետության տարածքի վրա, նկատելի առանձնահատկություններ է ձեռք բերել, որոնք նրան զգալիորեն հեռացրել են բարբառից՝ ավելի մոտեցնելով արդի գրական լեզվին:

ГОВОР ВЧЕРА И СЕГОДНЯ

*Резюме**С. Айрапетян*

Многие говоры, бытующие сегодня на территории республики, еще нуждаются в доскональном лингвистическом изучении. Посвященные им публикации в основном преследуют цель оценки стилистических-выразительных реалий в тех или иных художественных произведениях, которые, как правило, проявления говора вчерашнего, между тем, как сам говор - как живой язык- непрерывно меняется во времени и, следовательно, обращение время от времени к его языковым грамматическим особенностям не только желательно, но и необходимо.

В статье рассмотрены те миграционные демографические процессы и экономически-политические импульсы, которые так или иначе оставили свой след на дальнейшем изменении говора.

Современный разговорный язык Гюмри, который является самым большим и жизнеспособным говором Каринского диалекта на территории нашей республики начиная с последних десятилетий советской истории, приобрел много особенностей, которые в значительной мере все больше увели его от диалекта и приблизили к литературному армянскому языку.